ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վալերիյ Օսիպյան եւ Վարդան Մովսիսյան

2. ՀՀ ոստիկանության պետ, ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

3. Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք, 2018թ. նոյեմբերի 9-11

4. Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարություն

5. Մասնակցություն Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի աշխատակցի օրվան նվիրված տոնակատարություններին

6. Միջոցառման ընթացքում քննարկումներ տեղի չեն ունեցել

7. Գործուղման ընթացքում ՀՀ ոստիկանության պետ Վ.Օսիպյանը հանդիպում է ունեցել ՌԴ ՆԳ նախարար Վ.Կոլոկոլցեւի հետ, որի ընթացքում Կողմերը պատրաստակամություն են հայտնել հետագայում էլ ամրապնդել համագործակցությունը առկա եւ նոր քրեական մարտահրավերների ու սպառնալիքների դեմ պայքարի շրջանակում: ՌԴ ՆԳՆ ղեկավարը նշել է, որ երկկողմ փոխգործակցության արդյունավետ գործիքներից մեկն էլ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության եւ Հայաստանի Հանրապետության Միավորված կոլեգիան է:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ միջպետական օպերատիվ-կանխարգելիչ «Որոնում» գործողությանն ու Ինտերպոլի շրջանակներում համատեղ գործունեությանը վերաբերող հարցեր: Վ.Կոլոկոլցեւը պատրաստակամություն է հայտնել շարունակելու հայ մասնագետների ուսումնառությունը գերատեսչական ուսումնական հաստատություններում՝ բարձրագույն կրթության ծրագրերով ու որակավորման բարձրացման դասընթացներում՝ հանցավորության դեմ պայքարի առանցքային ուղղություններով:

Վ.Օսիպյանը հանդիպում է ունեցել նաեւ Մոսկվայի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացրել է ՀՀ ոստիկանությունում տեղի ունեցող բարեփոխումները, ինպես նաեւ պատասխանել է վերջիններիս հուզող հարցերին:

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վ.Մովսիսյանը հանդիպում է ունեցել ՌԴ ՆԳ նախարարի տեղակալ Ա. Գոստեւի հետ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ

ոստիկանության համար հատուկ տեխնիկական միջոցների հնարավոր ձեռքբերման, ինչպես նաև 2019թ. ՀՀ-ում ՌԴ ՆԳՆ և ՀՀ ոստիկանության Միավորված կոլեգիայի նիստի անցկացման նախապատրաստման հետ կապված հարցերը :

8. Գործուղման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

Ոստիկանության պետ **Վ. Օսիպյան**

«14» 11 2018թ.